նրանց հետ միաժամանակ որթնատնկերը զարգացել են Ճորոխի Աւազանում։ Միեւնոյնը կարելի է ասել ցորենի, գարու, բրնձի եւ ուրիշ հացահատիկների համար. թէ եւ հացահատիկները Ճորոխի Աւազանում այն ճոխութեան չեն հասել, ինչ բախտ ունեցան Բարձր-Հայքը, Տուրուբերանը, Այրարատը եւ Վասպուրականը. բայց իր խոնաւ եւ ջերմ կլիմայի պատճառով ճոխ սինինդը (եգիպտացորեն) աճեցրեց։ Ճորոխի խոր խոր ձորերը այնքան հարուստ մշակուած ձիթենու պարտէզներ ունին, որ բաւարարում են Հայաստանի ամբողջ 15 նահանգներին, իրենց ձիթով եւ ձէթունով, որից նրանք լիովին զուրկ են։ Իսկ պտղատու ծառերով այնքան հարուստ են, որ ո՛չ միայն թարմ եւ չոր միրգ էին փոխադրում շրջակայ նահանգները, այլ թթից, հոնից, սալորից, խաղողից, տանձ ու խնձորից մաթ, պաստեղ, քումա եւ ուրիշ նիւթեր էին պատրաստում եւ արտահանում դէպի դրացի գաւառներն ու նահանգները։ Իսկ անտառային փայտի տեսակներով այնքան հարուստ են, որ մրցակից չունին ոչ միայն Հայաստանի ու Վրաստանի գաւառներում, այլ ամբողջ Փոքր-Ասիայում եւ Պարսկաստանում։

Ինչպէս մեծամեծ քաղաքներ հիմնուել են Եփրատի, Տիգրիսի եւ Երասխի ափերում, այնպէս էլ հիմնուել եւ ծաղկել են Ճորոխի